



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ

26 հունվարի 2026 թվական

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ

ԿԱՅԱՅԱԾ ՆԻՍՏԻ ԹԻՎ 2 ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Լևոն Օնիկի Ալոյանի «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի 26. 01. 2026թ. 2-րդ նիստին մասնակցում էին բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Զարինե Սառաջյանը, Սիրանուշ Փարսադանյանը, Թադևոս Խաչատրյանը, Նառա Սարգսյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օնիկի Ալոյանի «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը Երևանի պետական համալսարանում գործող ԲԳԿԳ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ ժ. 01. 01- «Հայ միջնադարյան և նոր դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը, բանասիրության թեկնածուներ Սիրանուշ Փարսադանյանը, Զարինե Սառաջյանը, Նառա Սարգսյանը, Թադևոս Խաչատրյանը: Գնահատելով բաժին ներկայացված աշխատանքն ու խոսելով նրա առաջադիր խնդիրների և հիմնարար դրույթների մասին՝ Ս. Մարգարյանը նշեց, որ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Մակարյանի գիտական ղեկավարությամբ ու արգասաբեր ուղղորդումներով կատարվել և պաշտպանության է ներկայացվել

դժվար, ծավալուն, տեսական ու մեթոդական պատշաճ պատրաստություն պահանջող հիմնարար աշխատանք:

Մարգարյանը հավելեց նաև, որ Լևոն Ալոյանը իբրև վարդապետ ծառայում է Երուսաղեմի հայոց պատրիարքության Սուրբ Հակոբյանց վանքում, վարում է «Սիոն» կրոնական, պատմաբանասիրական, գրական ամսագրի գործունեությունը՝ տարիներ շարունակ հանդես գալով գաղթօջախի եկեղեցական ու ազգային կյանքի նորոգության բազմաթիվ ձեռնարկումներով: Թերևս նրա ազգասիրական գործունեության հետ է ուղղակիորեն առնչվում պաշտպանության ներկայացված գիտական սույն հետազոտության թեմայի ընտրությունը, որի նյութերի հավաքման, համակարգման ու շարադրման աշխատանքներով ատենախոսը զբաղվել է երկար տարիներ:

Լևոն Ալոյանի «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում» թեմայով թեկնածուական ատենախոսության առարկան Հովսեփ Շիշմանյան-Օերենցի ռոմանտիկական պատմավեպերի հետազոտությունն է պատումնաբանության և գրապատմության մոտեցումների համադրությամբ, լայն ընդգրկմամբ՝ պատմական թեմատիկայի գեղարվեստականացման պատմաքաղաքական, իմացաբանական, գեղագիտական հիմքերի քննությունը XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ գեղարվեստական արձակում:

Հետազոտությունը աչքի է ընկնում գիտական հստակ հարցադրումներով, որոշակիորեն նախանշված հայեցությամբ ու առաջադիր խնդիրների լուծման արդյունավետությամբ:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ինչպես պատմահամեմատական, մեկնաբանական, կառուցվածքային, այնպես էլ ընդհանուր գիտական (վերլուծություն, համադրում, վերացարկում) մեթոդները: Նկատի ունենալով հետազոտության բնույթը՝ հղում է կատարվել նաև պատմաքննական, աղբյուրագիտական մեթոդներին, որոնց միջոցով նյութը մեկնաբանվել է պատմականության և սոցիոլոգիական պատճառականության տեսանկյուններից: Ատենախոսության արժեքավոր մասն է կազմում Օերենցի վիպագրության վերաբերյալ մինչև օրս եղած գիտական տեսակետների ու կարծիքների նպատակային շրջանառումը:

Կատարվել են նպատակային բաժանումներ, որոնք հնարավորություն են տվել բացահայտելու խնդիրը տարբեր դիտանկյուններից:

Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ներածության մեջ Լևոն Ալոյանը հստակորեն ձևակերպել է ուսումնասիրության առարկան, նպատակը, խնդիրներն ու գիտական նորույթը, ներկայացրել է հարցի պատմությունն ու մշակվածության աստիճանը: Ըստ առաջադրված նպատակների՝ խնդիրները գիտական հիմնավորված լուծումներ են ստացել ատենախոսության երեք գլուխներում:

Հայտնի փաստ է, որ հայ վեպի պատմատեսությունը, բազմաթիվ առիթներով անդրադառնալով Ծերենցի գրական ժառանգությանը, հիմնականում քննության է առել մասնավոր հարցեր ու խնդիրներ, կատարել տեսական- մեթոդաբանական ու տիպաբանական ընդհանուր դիտարկումներ, համառոտ անդրադարձներ՝ փորձելով կարևորել գրողի դերը XIX դարավերջի հայ ռոմանտիկական գրականության մեջ: Ատենախոսն, անշուշտ, իր աշխատության մեջ անդրադառնում է Ծերենցի ստեղծագործության վերաբերյալ մամուլում («Արաքս», «Փորձ» և այլն) տպագրված հոդվածներին ու գրախոսություններին, գրողների, գրականագետների (Վ. Փափազյան, Լեո, Հ. Օշական, Ս. Երեմյան, Ա. Տերտերյան, Ս. Սարինյան, Ռ. Նանումյան, Զ. Ավետիսյան, Ա. Սաֆարյան, Ա. Մակարյան և այլք) ուսումնասիրություններին, սակայն և իրավացիորեն նկատում է, որ ամբողջական, համալիր ուսումնասիրություն այդպես էլ չի ստեղծվել՝ առկա թողնելով նրա ստեղծագործական աշխարհայացքի, պատմափիլիսոփայության, գեղարվեստական մտածողության առանձնահատկությունների վերաբերյալ բազմաթիվ հարցադրումներ:

Սույն ատենախոսության մեջ, խնդիր ունենալով ուսումնասիրել հայ ռոմանտիկական արձակի պատմությունը XIX դարավերջի սոցիալ-պատմական և մշակութային միջավայրում՝ հետազոտողը խորքային քննության է ենթարկել Հովսեփ Շիշմանյանի պատմավեպերը հենց ռոմանտիզմի տիպաբանության տեսակետից՝ նոր փաստերի ու իրողությունների մանրակրկիտ ու խորքային վերլուծությամբ փորձելով հասնել առաջադիր հարցադրման աստիճանական ընդարձակման և խորացման, գրողի ստեղծագործական ժառանգության վերաբերյալ որոշակի սկզբունքների ու չափանիշների ճշգրտման:

Ատենախոսը կարողացել է համակարգված ներկայացրել գրապատմական ժամանակի ներքին տեղաշարժերի, գրական դպրոցների, գեղագիտական ու աշխարհայացքային նորոգվող սկզբունքների գրականագիտական քննությունը:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Ռոմանտիզմը արևմտահայ պատմավիպասանության մեջ», Ալոյանը մեկնաբանում է ուսումնասիրության մեջ գործածվող հիմնարար հասկացությունները, խոսում է ռոմանտիզմի գրական ուղղության ձևավորման պատմական ու մշակութային նախադրյալների մասին, ներկայացնում գրական այս դպրոցի դրսևորման առանձնահատկությունները դարավերջի արևմտահայ գեղարվեստական արձակում:

Խոսելով պատմական նյութի գեղարվեստականացման մասին՝ ատենախոսն իրավացիորեն նկատում է, որ պատմական թեմատիկայի մուտքը գեղարվեստական գրականություն, անշուշտ, կապված է ռոմանտիզմին նախորդող մեթոդի՝ կլասիցիզմի գեղագիտությանը, երբ գրականությունը կոչվեց մեծարելու հայոց նախնիների քաջագնական ոգու ազատասիրությունը, պետության ու հայրենիքի պաշտամունքը:

Հայկական ռոմանտիզմի համատեքստում, սակայն, ռետրոսպեկտիվ՝ հետադարձ հայացքով պատմական անցյալի գեղարվեստականացումն ու իմաստավորումը պատմական, քաղաքական ու գեղագիտական միանգամայն այլ խնդրադրությամբ էր

թելադրված: Այն արդյունք էր այդ ժամանակաշրջանում ազգային-ազատագրական գաղափարների գործարկված իրողության և դրան համարժեք քաղաքական խնդրադրության:

Համաշխարհային պատմության ընթացքը ձգտում էր ազատասիրական մի ընդհանրական բովանդակության՝ փոքր ազգերին ևս համակելով ինքնորոշման ու ինքնաճանաչման ռոմանտիկական երազանքներով: Այս շրջանում է, որ կրկին շարժման մեջ է դրվում հայոց պատմությունը, առաջին պլան են գալիս զարթոնքի ու ազգային ոգու գաղափարախոսները, հասարակական գիտակցության ընդհանուր համակարգում առաջնակարգ նշանակություն է ստանում գեղարվեստական գրականությունը:

Անհատի տեղը, հասարակության մեջ նրա դերակատարության իմաստը սկսում է որոշվել հայրենիքի ու ազգության հետ իր կապի խնդրադրությամբ: Կորուսյալ, օտարված հայրենիքն ու տրոհված ազգությունը վերականգնելու առաքելությունն է ուրույն բովանդակություն ու նկարագիր տալիս ռոմանտիզմի պատմավիպասանության հերոսին:

Մանրամասնորեն ներկայացնելով այս ընթացքը՝ Ալոյանը տալիս է որոշակի ճշգրիտ բանաձևումներ, շեշտում, թե ինչու արևմտահայ գրականության մեջ պատմական թեմատիկան ավելի լայն ծավալով է ի հայտ գալիս, քան արևելահայի մեջ՝ ուղղակիորեն ստանձնելով «ազգային-քաղաքական առաքելություն», ձևավորելով կառուցակազմիչ նարատիվներ:

Ինքնին անկասկած էր, որ պատմաքաղաքական բախտորոշ իրադարձությունների կիզակետում հայտնված արևմտահայ մտավորականների ակնկալություններում ազգային զարթոնքի ու հայրենասիրկության գաղափարական մի ծրագիր էր գործում, որն ամբողջապես գտնվում էր ռոմանտիզմի գաղափարական ու գեղագիտական հայեցության սահմաններում:

Ընդհանուր պատմական այս գործընթացի մշակութային արձագանքներն են, ըստ հետազոտողի, առավել ծավալով և խորությամբ դրսևորվում Ծերենցի վիպագրության մեջ:

Հատկանշական է, որ Ալոյանը իր աշխատանքում խնդիրը քննում է ոչ միայն արևմտահայ արձակագիրների, այլև արևմտահայ ռոմանտիկ բանաստեղծների ստեղծագործությունների համապատկերում՝ Ղ. Ալիշան, Ռ. Պատկանյան, Ս. Շահագիզ, Մ. Պեշկեթաշյան, Պ. Դուրյան:

Երկրորդ գլխում («Ծերենցի պատմափիլիսոփայական հայացքները») ատենախոսն անդրադառնում է պատմավեպի արդիականության, պատմականի ու գեղարվեստականի, անհատի ու հասարակության հարաբերակցության, գրողի պատմափիլիսոփայության, Բաֆթու և Մուրացանի նույնաբնույթ երկերի հետ համեմատության խնդիրներին:

Պատմության հերոսական շրջանների գեղարվեստականացումը ներդաշնակելով ժամանակի քաղաքական, ազգային-ազատագրական խնդրադրությանը և հանրության հոգեբանությանը՝ Ծերենցի երեք պատմավեպերն էլ («Թորոս Լևոնի», «Երկունք Թ

դարու», «Թեոդորոս Ռշտունի») հետապնդում էին և՛ գեղագիտական, և՛ հատկապես քարոզչական, ուսուցողական նպատակներ:

Ատենախոսը իրավացիորեն շեշտադրում է, որ պատմական անձերի հոգեբանությունը, բարոյական կեցվածքը, հայրենասիրական նկարագիրը, բարու, կատարյալի և նման այլ արժեքների գեղաձևումը վիպական շարադրանքի համատեքստում ուղղակիորեն հղված են Ծերենցի պատմավիճիկաստիպության հիմնարար դրույթների փոխաձևությանը, որն ուղիղ իմաստով առնչվում է հասարակական դաշինքի տեսությանը: Հասարակության դասային ստորաբաժանումը բնական ընտրությամբ կատարված անհրաժեշտություն է, և, խախտել բնական այս կարգը՝ նշանակում է աղավաղել հասարակական կառույցն ու դատապարտվել հավիտենական քառսի: Հենց այստեղ, ըստ Ծերենցի, պիտի փնտրել հայոց պատմության դժբախտությունների ու անկումների պատճառը:

Ուժեղ ու անպարտելի է այն ազգը, որի դասերը շաղկապված են հասարակական ու բարոյական դաշինքով: Ահա, ըստ ատենախոսի, այս գաղափարի վրա են կառուցված Ծերենցի պատմավեպերը, այս միջուկից են որոշարկվում համապատասխան պոլիտիկ կառուցվածքները, կերպարների տիպաբանությունն ու հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության երրորդ՝ «Ծերենցի պատմավիպասանության պոետիկան» գլխում խոսվում է այս առանձնահատկությունների մասին, երևում են պատմավեպերի «ներքին» տարածության մեկնաբանության փորձերը՝ բնագիրը կազմակերպող հնարավոր բոլոր բաղադրատարրերի խոր յուրացումներով:

Քննության այս կտրվածքում Ալոյանը դիպաշարային դրվագները մտածված և ճիշտ է ընտրում՝ նախընտրելի մեթոդոլոգիայի սահմաններում մոտիվը կազմակերպող պատմական դրվագի, պահի, հերոսների բնութագրի ու վիպական միջավայրի պատկերը ուղիղ արտածելով սկզբնաղբյուրներից, անհրաժեշտության պարագայում կամ շատ հաճախ դիմելով հայ պատմագրությանը, վիպային ներկայացվող իրողությունները համադրելով ու համեմատելով պատմական սկզբնաղբյուրի, երբեմն՝ մի քանի սկզբնաղբյուրների հետ:

Այստեղ են Սեբեոս, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Սմբատ Սպարապետ, Ղևոնդ Ալիշան, Մատթեոս Ուռհայեցի, Ղևոնդ պատմիչները, որոնց գործերի պատմագիտական ու ազգային-մշակութաբանական համարժեքից ատենախոսը վերացարկում է Ծերենցի պատմավիպասանության մետաֆիզիկական ցույց տալով բազմապլան վելուծություն կատարելու ակնհայտ կարողություններ:

Ողջունելի է պատմագրական մեծածավալ նյութի այսօրինակ խորքային իմացությունը. այն, անկասկած, պայմանավորված է ոչ միայն սույն ուսումնասիրության գիտական խնդրադրությամբ, այլև քննադատի գիտական հետաքրքրությունների շրջանակն ու իմացականությունը բնորոշող մասնագիտական որակներով:

Ատենախոսության մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կերպարակերտման արվեստին, գրողի լեզվի և ոճի ինքնատիպությանը նվիրված

հատվածները: Ուշագրավ են հատկապես կանանց կերպարների, նրանց հոգեբանական նկարագրի վերլուծության շքեղ կտորները:

Նախընտրելով գիտահետազոտական աշխատանք կատարելու նման ընդունելի և արդյունավետ եղանակ՝ ատենախոս Լևոն Ալոյանը հնարավորինս հասել է առաջադրված խնդրի գիտական բացահայտմանը ու ամբողջացմանը:

Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է, գլուխներն ու ենթագլուխները փոխկապակցված են, եզրակացությունները բխում են կատարված վերլուծություններից: Ատենախոսությունը շարադրված է մաքուր հայերենով, բառապաշարը գիտական է, քերականական կառույցները գրագետ են՝ գրեթե առանց վրիպակների:

Օգտագործված գրականության ցանկը լիարժեք է, կանոնավոր, տպագրված գիտական հոդվածներն ու սեղմագիրը լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության մեջ, ինչպես ցանկացած աշխատանքում, կան նաև հետազոտության առանցքից դուրս մնացած որոշ խնդիրներ, մանր վրիպումներ, որոնց մատնանշումներն ու շտկումները կարող են շահեկան լինել հետազայում այն իբրև մենագրություն տպագրության պատրաստելու ժամանակ:

Այսպես: Որպես աշխատանքի նորույթ նշվում է, որ ատենախոսը փորձել է «համակողմանիորեն ուսումնասիրել և տիպաբանական քննության ենթարկել Ծերենցի, Բաֆֆու և Մուրացանի պատմավեպերը...»: Այնինչ հիմնական ուշադրությունը սևեռված է Ծերենցի երեք պատմավեպերի հանգամանալից քննությանը:

Ատենախոսության գլուխներում որոշ հատվածներ (օր.՝ վեպերի գրության տարեթվեր, աղբյուրների, գաղափարական հիմքերի ու նպատակների մասին դատումներ ևն.) կրկնվում են նույնությամբ:

Ներկայացված եզրակացությունները որոշ դեպքերում կրում են ընդհանրական բնույթ և լիովին չեն արտացոլում իրականացված հետազոտության ողջ խորությունն ու ներուժը: Այս փոքրիկ թերությունները, սակայն, ամենևին չեն ստվերում պաշտպանության ներկայացված աշխատանքի գիտական բարձր արժեքը:


ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը գտնում է, որ կատարվել է ծավալուն, հանգամանալից և բարձրարժեք ուսումնասիրություն: Հետազոտողը հասել է գիտական առաջադիր խնդրի բացահայտմանն ու ամբողջացմանը՝ ըստ էության նոր էջ բացելով Ծերենցի գրական ժառանգության ուսումնասիրության բնագավառում:

Սույն ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Լևոն Օսիկի Ալոյանի «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին և ժ.01.01- «Հայ միջնադարյան և նոր գրականության» թվանիշին, և նրա հեղինակը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայ նոր գրականության բաժինը միջնորդում է ԵՊՀ գրականագիտության 012 մասնագիտական խորհրդին՝ Լևոն Օնիկի Ալոյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

 Սիրանուշ Մարգարյան
ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
հայ նոր գրականության բաժնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ստորագրությունը  հաստատում եմ
26 հունվարի 2026 թվական